

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«Ք Ռ Ա Շ Ք Ա Թ»

ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ԲԱԶԱԼՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2024-2027թթ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	5
Նախատեսվող գործունեության բնութագիրը	13
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	20
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	25
2.1 Ռեզիլիենտ, երկրաձևաբանություն	25
2.2 Շրջանի կլիման	28
2.3 Մթնոլորտային օդ	31
2.4 Ջրային ռեսուրսներ	33
2.5 Հողեր	37
2.6 Բուսական և կենդանական աշխարհ	38
2.7 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	42
2.8 Անտառային ռեսուրսներ	45
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	46
Ենթակառուցվածքներ	46
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	51
Պատմության, մշակութային հուշարձաններ	53
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	54
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	59
6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	67
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	69
Օգտագործված գրականության ցանկ	72
Հավելված 1. Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի տվյալները	73
Հավելված 2. Աշխատանքների նախահաշիվն ու ժամանակացույցը	75

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

«Քոաշքաթ» ՍՊ ընկերությունը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարում Բալախովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի շուրջ 25.19հա մակերեսով տարածքում, նպատակ ունենալով պարզաբանել տեղամասի բազալտների համապատասխանությունը «Քարաբլոկներ բնական քարից՝ երեսապատման իրերի արտադրության համար: Տեխնիկական պայմաններ» 9479-2014 ԳՈՍՏ-ի, «Խիճ և կոպիճ խիտ ապարներից շինարարական աշխատանքների համար. Տեխնիկական պայմաններ» 8267-93 ԳՈՍՏ-ի և «Ավազ շինարարական աշխատանքների համար: Տեխնիկական պայմաններ» 8736-93 ՀՍՏ ԳՈՍՏ-ի պահանջներին:


Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Աբովյան խոշորացված համայնքի Մայակովսկի բնակավայրի սահմաններում:

Հայցվող տեղամասը գտնվում է Մայակովսկի բնակավայրի մոտակա բնակելի շինություններից 1.06կմ, Բալախովիտ բնակավայրի շինություններից՝ 0.99-1.2կմ, Գետարգելի շինություններից՝ 1.4կմ և Առինջ բնակավայրի շինություններից՝ մոտ 1.7կմ հեռավորությունների վրա:

Տեղամասի մոտ 2.6կմ հեռավորության վրա անցնում է Երևան-Սևան- Իջևան-Ադրբեջանի սահման Մ-4 միջպետական նշանակության ավտոճանապարհը, մոտ 1.85կմ հեռավորության վրա՝ Վերին Պտղնու տրանսպորտային հանգույց - Ջրաբեր-Հրազդան -Հրազդանի քրեակատարողական հիմնարկ Հ-1 հանրապետական նշանակության ավտոճանապարհը, մոտ 1.7կմ հեռավորությունների վրա՝ Տ-6-37 և Տ-6-16 տեղական նշանակության ճանապարհները:

Աբովյան քաղաքային բնակավայրը գտնվում է հայցվող տեղամասից մոտ 2.5կմ հեռավորության վրա, հայկական երկաթուղու Աբովյան կայարանը՝ մոտավորապես 3.5կմ հեռավորության վրա: Երևան քաղաքի Ավան վարչական շրջանը գտնվում է տեղամասից մոտ 3.0կմ հեռավորության վրա:

Տարածքի իրադրային հատակագծերը ներկայացված են նկարներ 1-4-ում:



◆ Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամաս


Նկար 1.



Նկար 2.



Նկար 3.



Նկար 4.

Աղյուսակ 1.

Կետի հերթական համարը	Կոորդինատները	
	X	Y
1.	4456736.0000	8467245.9631
2.	4456584.7046	8467414.5227
3.	4456326.7683	8467596.5578
4.	4456173.9785	8467758.6018
5.	4455778.1144	8467549.4426
6.	4455910.8150	8467341.0459
7.	4455972.0251	8467086.1066
8.	4456069.9739	8467282.6801

Կետի հերթական համարը	Կոորդինատները	
	X	Y
9.	4456145.1600	8467349.5100
10.	4456258.5702	8467306.5459
11.	4456269.9760	8467447.8573
12.	4456434.1743	8467389.8280
13.	4456423.7869	8467281.4241
14.	4456636.8049	8467179.9235
1.	4456736.0000	8467243.5655

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր:

Հայցվող տարածքը սահմանափակող եզրային կոորդինատները (ըստ ArmWGS-84 համակարգի) ներկայացվում են ստորև, աղյուսակ 1-ում:

Արևելյան տեղամասի տարածքը տեղակայված է 1440-1360մ բացարձակ բարձրությունների վրա:

Հայցվող տեղամասի շրջանի շերտագրական կտրվածքը ներկայացված է հետևյալ տեսքով (ներքևից-վերև):

ՊԱԼԵՈԳԵՆ-ՆԵՈԳԵՆ

Շերտագրական կտրվածքի մերկացված մասի ամենահին ապարները ներկայացված են ստորին-միջին օլիգոցենի (Շոռաղբյուրի շերտախումբ), վերին օլիգոցեն-ստորին միոցենի (Հացավանի կամ խայտաբղետ շերտախումբ), միջին միոցենի (գիպսաաղաբեր շերտախումբ) նստվածքային առաջացումներով, որոնք ներկայացված երկրաբանական քարտեզի սահմաններում չեն մերկանում:

Ստորին-միջին օլիգոցենի (Շոռաղբյուրի շերտախումբ): Շերտախումբը կազմող ապարները ներկայացված են հիմնականում բաց շագանակագույն դեղնագորշավուն ավազաքարերով և հազվադեպ՝ ուֆաավազաքարերով: Օլիգոցենի ապարների առավելագույն հզորությունը հասնում է 1100մ-ի:

Վերին օլիգոցեն-ստորին միոցենի (Հացավանի շերտախումբ): Այս շերտախմբի նստվածքներն անկյունային աններդաշնակությամբ, տրանսգրեսիվորեն տեղադրված են ստորին-միջին օլիգոցենի նստվածքների վրա և ներկայացված են մոտ 700մ հզորությամբ հերթափոխվող խայտաբղետ, հիմնականում՝ կարմրավուն կոնգլոմերատներով, ավազաքարերով, կավերով (հաճախ՝ գիպսաբեր):

Միջին միոցենի (գիպսաաղաբեր շերտախումբ): Այս հասակի տերիզեն-հեմոգեն նստվածքային առաջացումները տարածականորեն հարում են վերին օլիգոցեն-ստորին միոցենի նստվածքների տարածման մարզերին և կտրվածքով դեպի վեր աստիճանաբար փոխարինում են վերջիններիս: Հորատանցքերով բացահայտված է շերտախմբի լայն տարածումը Հրազդան և Քասախ գետերի ավազաններում, Արամուսի տեղամասում, Արարատյան իջնածքում և

Նոկտեմբերյանի սարավանդում: Ներկայացված է մոտ 1400մ հզորությամբ տերիզեն-հեմոգեն նստվածքային առաջացումներով՝ գիպսաաղաբեր նստվածքներով:

Վերին միոցեն (սարմատի հարկ): Այս հասակի նստվածքներն անկյունային աններդաշնակությամբ տեղադրված են գիպսաաղաբեր շերտախմբի ապարների վրա և տարածաշրջանում հայտնի են «սպիտակավուն» և Հրազդանի շերտախմբեր անվամբ: Շերտախմբի ապարները զգալի աններդաշնակությամբ տեղադրված են գիպսաաղաբեր շերտախմբի վրա և ներկայացված են պեմզամոխրային ավազաքարերով, պեմզային գրավելիթներով, տուֆակոնգլոմերատներով, տուֆաակրոլիթներով, տուֆերով, կավերով, ավազաքարերով, կրային ավազաքարերով: Այս հասակի նստվածքների ընդհանուր հզորությունը մոտ 1000մ է:

Վերին միոցեն-ստորին պլիոցեն (մեոտիս-պոնտոսի հարկեր, Ողջաբերդի շերտախումբ՝ ստորին մաս): Սարմատի հարկի նստվածքներն էրոզիոն աններդաշնակությամբ ծածկված են հրաբխածին-նստվածքային ապարների հզոր հաստվածքով (600մ և ավելի), որը հայտնի է Ողջաբերդի շերտախումբ անվամբ:

Ստորին պլիոցեն (պոնտ-կիմերիյան, Ողջաբերդի շերտախումբ՝ վերին մաս): Այս հասակն է վերագրվում հրաբխային շերտախմբի վերին մասին, որը վերը նկարագրվածից անջատվում է որոշ ընդմիջումով և առանձին տեղերում թույլ արտահայտված անկյունային աններդաշնակությամբ: Ողջաբերդի շերտախմբի ապարները ծածկվում են վերին պլիոցենի և անտրոպոգենի լավային ծածկոցներով:

Վերին պլիոցեն: Այս հասակի ապարները ներկայացված են հիմնականում հիմքային կազմի լավաների ծածկոցներով, դոլերիտային և օլիվինային բազալտներով, որոնք հավանաբար արտավիժվել են Գեղամա լեռների առանցքային մասի խոշոր ճեղքային հրաբուխներից և տարածվել են Հրազդանի հովիտով ու լեռնաշղթայի լանջերով դեպի հարավ-արևմուտք: Դրանց հզորությունը խիստ փոփոխական է և առանձին տեղերում հասնում է 30-70մ-ի: Ծագումնաբանորեն այս բազալտների հետ են կապված Բալահովիտի հանքավայրի տեղամասերի, ինչպես նաև հայցվող տեղամասի բազալտները:

Վերին պլիոցեն-ստորին չորրորդական (Հադիսի շերտախումբ): Այս հասակի առաջացումները հիմնականում ներկայացված են սպիտակավուն թթու կազմի պեռլիտ-պեմզային ավազների ազլոմերատային (Չարենցավան-Ջրաբերի հոսք՝ ռիոլիտներ, օբսիդիաններ, պեռլիտներ), բազալտային և անդեզիտաբազալտային կազմերի լավային հոսքերով: Այս հրաբխային առաջացումները հանդիսանում են

Հատիս և Գութանասար հրաբուխների գործունեության արգասիքները: Այս առաջացումների հետ է ծագումնաբանորեն կապված երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Հարավ-արևմտյան տեղամասը:

Մտորին չորրորդականին են վերագրվում բազալտները և անդեզիտաբազալտները, որոնք հիմնականում ծածկված են ավելի երիտասարդ լավային ծածկոցներով: Միայն տեղ-տեղ երևում են դրանց ոչ մեծ ելքերը:

Միջին չորրորդականին են վերագրվում տարածաշրջանում լայն տարածում ունեցող երևան-լենինականյան տիպի հրաբխային տուֆերի (իգնիմբրիտների) հոսքերը և ծածկոցները: Որոշ տեղերում դրանք տեղադրված են անմիջապես դոլերիտային բազալտների լվացված մակերևույթի վրա:

Վերին չորրորդական-ժամանակակից անդեզիտաբազալտ-անդեզիտային լավաների հսկայական ծածկոցներ են առաջացնում Գեղամա լեռների հյուսիսային հաստվածքում: Տեղ-տեղ էլ դրանց նեղ լեզվակները խուժում են Հրազդանի կիրճը և զբաղեցնում են ամենացածր դիրքը:

Ժամանակակից առաջացումները լայն տարածում ունեն գետահովիտներում, լեռնալանջերի հարթեցված մասերում, ներկայացված են ալյուվիալ-պրոլյուվիալ (ավազազլաքարային, կոպճային) և դելյուվիալ (ավազակավային, ավազախճային) նստվածքներով:

Ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքները հարում են ժամանակակից գետերի հունային և վերհունային դարավանդներին, ներկայացված են վատ տեսակավորված գլաքարերով և ավազախճային նստվածքներով: Ալյուվիալ առաջացումների հզորությունը 10-20մ է:

Դելյուվիալ առաջացումները կուտակված են հիմնականում լեռնալանջերին, ներկայացված են տարբեր, հիմնականում լավային ապարների բեկորներով, ավազա-կավային, ավազախճային թափվածքներով և նստվածքներով:

Բալահովիտի հանքավայրի Արևելյան տեղամասի բազալտների հաստվածքը ծագումնաբանորեն հարում է Կոտայքի սարավանդի վերին պլիոցենի լավային ծածկոցին:

Տեղամասի շրջանում սարավանդի ռելիեֆը հարթ-բլրակային է, թեքությամբ դեպի հարավ-հարավ-արևելք, գոգավոր և զուրկ է անտառային ծածկոցից:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի տարածքը հյուսիսից-հարավ ձգվում է մոտ 960մ՝ մոտ 685մ առավելագույն լայնությամբ:

Հայցվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը համանման է Բալահովիտի բազալտների հանքավայրին: Ըստ ֆոնդային քարտեզագրական և տեքստային նյութերի վերլուծության արդյունքների՝ Արևելյան տեղամասի երկրաբանական կառուցածքում մասնակցում են հետևյալ առաջացումները.

✓ այլովիալ-դելյուվիալ առաջացումներ, բազալտների տարաչափ բեկորներով, ավազի և խճի խառնուրդով ներկայացված ժամանակակից առաջացումներ: Հարակից բացահանքի դիտարկման տվյալներով այս առաջացումների հզորությունը հասնում է 1-3մ-ի;

✓ ստորին պլիոցենի անդեզիտային, անդեզիտաբազալտային, բազալտային, անդեզիտադալիտային կազմի և դոլերիտային բազալտների լավային հոսքերը և դրանց հրաբխային խարամները: Հրաբխային հաստվածքի ընդհանուր հզորությունը հասնում է 400մ-ի: Այս հաստվածքի հետ է կապված տեղամասի օգտակար հանածոն;

✓ միջին նեոպլեյստոցենյան երևան-լենինականի տիպի հրաբխային տուֆերը, որոնց հզորությունը տատանվում է 2.5-10.0մ սահմաններում:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը արտացոլված է գծագրական հավելված 2-ի սխեմատիկ երկրաբանական քարտեզում:

Օգտակար հանածո հանդիսացող ստորին պլիցենի բազալտային-անդեզիտաբազալտային ապարները հիմնականում մանրա-միջահատիկ, ճեղքավորված, ծակոտկեն, առանձին միջակայքերում խոշորածակոտկեն, մոխրագույն և մուգ մոխրագույն են: Հաստվածքը խախտված է տարբեր բնույթի և համակարգերի (թեք և մերձհորիզոնական) ճեղքերով, որոնք կապված են լավայի սառեցման պայմաններից, նորագույն տեկտոնական շարժումների և հիմնատակող Շոռաղբյուրի հաստվածքի գիպսաաղաբեր կավերի պլաստիկ դեֆորմացիաների ինտենսիվությամբ: Տեկտոնական ծագման ճեղքերը մեծ տարածում ունեն և հաճախ համընկնում են անջատման ճեղքերին: Այս տարաբնույթ ճեղքերի հատումներով է պայմանավորված տեղամասը կազմող բազալտների մեծաբեկորային («ներքնակա-նման») և անորոշ-սյունաձև անջատումները:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 2-ի հրահանգի աղյուսակ 1-ի հայցվող Արևելյան տեղամասը վերագրվում են 1բ խմբին՝ հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված:

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի տարածքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ «Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы» և «Շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման» հրահանգների հանձնարարականների: Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մերկացման և փորձնական բացահանքի անցման, սյունակային հորատման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 2-ի հրահանգի աղյուսակ 1-ի հայցվող տեղամասը վերագրվում են 1բ խմբին՝ հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված:

Այս խմբի հանքավայրերի համար նախատեսված է հետախուզական ցանցի խտության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Հանքավայրերը			Փորվածքների միջև հեռավորությունները (մ)՝ պաշարների կարգերի ստորաբաժանման համար		
Խմբեր	Ենթախմբերը	Երկրաբանական կառուցվածքի հայտանիշները	A	B	C
1	1բ	Հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված	100-200	200-300	300-400

Հաշվի առնելով տեղանքի ռելիեֆի ու դրա ուղղությամբ մեղմաթեք անկմամբ օգտակար հանածոյի մարմնի տեղադրման պայմանները, ինչպես նաև տեղամասի հետագա շահագործման լեռնատեխնիկական պայմանները, հետախուզական հորատանցքերի միջև հեռավորությունը կազմել է 100-255մ, ինչը թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել A և B արդյունաբերական կարգերով:

Հետախուզման ստորին սահման է ընդունվում 1355մ հորիզոնը:

Նախապատրաստական շրջան, ծրագրի կազմում,

կազմակերպում և լուծարում

Մինչև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՈՍՏ-երին:

Կատարողների աշխատանքի ծախսը կազմում է.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Նախագծի կազմում.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Կազմակերպում և լուծարում

Հանաձայն “Инструкция по составлению проектов и смет на геолого – разведочные работы” հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1%-ը: Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8%-ը:

Երկրաբանահանութային աշխատանքներ

Հայցվող տարածքի կոորդինատները որոշվել են տեղանքում սերտիֆիկացված GPS սարքի կիրառմամբ ըստ WGS-84 ARMREF 02 համակարգի՝ կատարելով նաև տեղորոշիչ կապակցում դաշտային պայմաններում:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է շուրջ 25.19հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ: Երևակման երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 13.5կմ:

Մեխանիկական սյունակային հորատում

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 112-96 մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել մինչև 95 մետր խորության 20 հորատանցքեր 1038 մետր ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Հորատանցքերի խորությունները որոշելիս հաշվի են առնվել տեղամասին հարող այլ հանքավայրերի երկրաբանական տվյալները: Հորատվող ապարները համապատասխանում են III, IV, V և IX կարգերին: Հորատման ծավալների մոտավոր բաշխումը ըստ հորատելիության կարգերի ներկայացված է ստորև.

- սերտաճած բուսական արմատներով հողային շերտ - III կարգ – 21 գծ.մ,
- կավավազային դեյուվիալ առաջացումներ բազալտների և տուֆերի տարաչափ բեկորներով — IV կարգ – 56գծ.մ,
- տուֆեր, հողմահարված, ճաքճքված բազալտներ – VII կարգ – 350գծ.մ,
- թարմ բազալտներ, դոլերիտային բազալտներ – IX կարգ – 611գծ.մ:

Հորատող հաստոցի տեղակայում և տեղահանում

Նախատեսվում է 20 հետախուզական հորատանցքերի հորատում, ինչի նպատակով կատարվելու է հորատող հաստոցի 20 տեղակայում և տեղահանում:

Լեռնային փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների

- հորատահանուկի փաստագրում – 1038գծ.մ
- փորձնական բացահանք - 30.0 գծ.մ:

Նմուշարկում

Օգտակար հանածոն նախատեսվում է ուսումնասիրել որպես երեսապատման նյութ և շինարարական խճի և ավազի արտադրման հումք:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատանցքերը նմուշարկել ընդհատվող տիրույթներով, հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը մինչև 5մ: Հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 100 նմուշ ;

- կատարել փարձնական արդյունահանում բացահանքից – 150խ.մ:

Քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 5 նմուշ, քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով՝ 5 նմուշ:

Կկազմվի նաև 1 համախառը նմուշ 50խ.մ ծավալով փուշտա շերտից՝ հողմահարված ապարները որպես շինարարական ավազ և խիճ ուսումնասիրելու համար:

Լաբորատոր հետազոտություններ

Օգտակար հանածոյի քիմիական կազմը կորոշվի ըստ 5 նմուշների անալիզի: Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 100 հորատահանուկային նմուշներով: Հորատահանուկային նմուշներից 60-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 40-ը՝ կրճատ: Լաբորատոր կրկնօրինակների կշռուկներից կկազմվեն 10 նմուշներ, որոնք կուղարկվեն վերստուգիչ լաբորատորիա:

Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 5 հոկուկների միջոցով:

Ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունները ուսումնասիրելու, ինչպես նաև հետագա արդյունահանման տեխնիկատնտեսական հաշվարկների համար ելակետային տվյալներ ստանալու նպատակով լաբորատոր հետազոտման կենթարկվի փորձնական բացահանքից արդյունահանված քարաբանական նյութը, ինչի հիման վրա կորոշվի լեռնային զանգվածից բլոկների ելքը, բլոկներից երեսապատման սալերի ելքը: Փորձնական հանույթից առաջացած թափոնները և փուշտա շերտի առաջացումները կենթարկվեն փորձարկումների որպես

շինարարական խիճ և ավագ դրանց պիտանելությունը պարզաբանելու նպատակով:

Քիմիական կազմի լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումները նախատեսվում են կատարել մասնագիտացված լաբորատորիայում:

Փորձնական հանույթ

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է տեղամասի սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ $20 \times 4 \times 2 = 200\text{մ}^3$ ծավալով, որից մոտ 50մ^3 հողաբուսական շերտ և փուշտա շերտի ապարներ և 150մ^3 չհողմնահարված, թարմ ապարներից: Վերջիններից կկատարվի փորձնական հանույթ պիտանի բլոկների ելքի որոշման համար, իսկ փոշտա շերտի բազալտները փորձարկվելու են որպես հումք շինարարական խճի և ավազի ստացման համար:

Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական հարատասեպային եղանակով, օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր:

Աշխատանքների ընթացքում կատարված ծախսերի և վերջնարտադրանքի քանակի մասին ստացված տվյալները հիմք կհանդիսանան հանքավայրի արդյունաբերական գնահատման կազմման համար:

Տոպո-մարկշեյդերական աշխատանքներ

Նախատեսվում է կատարել 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 25.19 մակերեսով տարածքում, բոլոր հետախուզական փորվածքների, փորձնական բացահանքի գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

Ինժեներակրաբանական և հիդրոերկրաբանական

ուսումնասիրություններ

Երկրաբանահետախուզական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ փորձնական հանույթի և հորատանցքերի անցման ընթացքում: Անհրաժեշտության դեպքում հիդրոերկրաբանական ուսումնասիրության նպատակով կկնքվի պայմանագիր մասնագիտացված կազմակերպության հետ:

Օգտակար հանածոյի ռադիոմետրական ուսումնասիրություններ

Օգտակար հանաձոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ հանքավայրի ամբողջ տարածքում ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Հաշվետվության կազմման աշխատանցային աշխատանքներ

Բալանսի հաշվարկի հանքավայրի Արևելյան տեղամասի տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանաձոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո կկատարվեն աշխատանցային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանաձոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ տեղամասի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման դիտարկմանը:

Բեռների և ուղևորների փոխադրում

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների և ուղևորների փոխադրումը կկատարվի ասֆալտապատ և հողածածկ ճանապարհներով:

Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով:

Հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն

Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի ռելիեֆը, հորատման հարթակներ կառուցվելու են 15 հորատանցքերի համար: Հարթակների չափերը ընդունվում են 5x7մ: Հարթակների տարածքից հեռացվելու է շուրջ 183.75մ³ հողաբուսական շերտ և 1310մ³ դելյուվիալ փուխր-բեկորային առաջացումներ (կավավազներ տուֆերի և բազալտների տարաչափ բեկորներով):

Աշխատանքների ժամանակ օգտագործվելու են արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, նախագծով նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատականը

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները իրականացվելու են Աբովյան խոշորացված համայնքի Մայակովսկի բնակավայրի տարածքում:

Հայցվող տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը որոշակի ազդեցություն կունենա նաև ազդակիր համայնքի մարդկանց կյանքի և պայմանների վրա:

Աշխատանքների թափանցիկությունն ու համայնքների իրազեկվածությունն ապահովելու նպատակով՝ «Քոաշքաթ» ՍՊԸ-ի կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, իրականացվելու են հանրային լսումներ և քննարկում, որոնց ընթացքում դիտարկվելու են համայնքներին աջակցության հնարավոր միջոցառումները:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի տրամադրվելու է ֆինանսական աջակցություն 450.0հազ.դրամ չափով: Աշխատանքներն իրականացվելու են համայնքապետարանի հետ՝ պարզելու համար առաջնային լուծում պահանջող սոցիալական խնդիրները:

Երկրաբանահետախուզական աշխատանքների փուլում կատարվելու է նաև համայնքի տնտեսական զարգացման ուղղվածության և հնարավոր զարգացման ուղղությունների վերաբերյալ ելակետային պայմանների հավաքագրում, որոնք հետագա շահագործական աշխատանքների ժամանակ հիմք կհանդիսանան համայնքում աջակցության երկարաժամկետ ծրագրերի մշակման համար:

Սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերը պիտի միտված մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես.

- նոր աշխատատեղերի ստեղծում: Երկրաբանահետախուզական, ինչպես նաև հետագա արդյունահանման աշխատանքների ընթացքում բազմաթիվ օժանդակ աշխատանքների (օրինակ՝ վարորդներ, տեխնիկական ջրի մատակարարում, աշխատակիցներին սննդի մատակարարում և այլն) իրականացման համար հատուկ մասնագիտական կրթություն չի պահանջվում: Հետևաբար, այդ

աշխատանքներին ներգրավվելու են ազդակիր համայնքների բնակիչները, ինչը կստեղծի բնակիչների զբաղվածություն և լրացուցիչ եկամուտ ընտանիքների համար: Միաժամանակ, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնող անձնակազմի սննդի ապահովման նպատակով գնումներ են կատարվելու հենց համայնքներում, ինչը նույնպես դրական ազդեցություն է ունենալու ապրանքաշրջանառության ծավալի, տեղական արտադրանքի սպառման շուկայի վրա:

- համայնքների տնտեսական ուղղվածության շրջանակներում՝ նոր, ընդերքօգտագործման հետ չկապակցված արտադրանքի ստեղծման շղթայի մշակում և ներդրում հետագա՝ շահագործման փուլում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել կենսաբազմազանության, այդ թվում բուսական ծածկույթի դիտարկում, ուսումնասիրություն՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետների մասնակցությամբ: Առանձնահատուկ ուշադրություն է նախատեսվում դարձնել դեղաբույսերի տեսակի և տարածման արեալների վրա: Ուսումնասիրվելու է նաև համայնքում այգեգործության և հատապտղային մշակաբույսերի աճեցման արդի վիճակը, բերքի վերաբերյալ վիճակագրական տվյալները, սպառման շուկան:

Միաժամանակ, «Քոաշքաթ» ՍՊ ընկերությունը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ամբողջական մոնիթորինգ՝ համայնքների բնակիչների, դրանց կենսապայմանների վրա ցանկացած բացասական ազդեցությունների վերահսկման և կանխարգելման նպատակով:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման

անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ռլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՀ օրենք ՀՕ-522-Ն օրենք, ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝

ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը. մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է ՅՕ-150-Ն, 03.05.2023), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման,

հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով սահմանվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N 1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով

սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

– ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N 342-Ն հրաման, որով հաստատվել է այաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

– ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

– ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:

– ՀՀ կառավարության 11.11.2021թ.-ի N 1848-Ն որոշում, որով հաստատել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը:

– ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N°1059-Ա որոշում, որով հաստատվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը (համաձայն N 1 հավելվածի) և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները (համաձայն N 2 հավելվածի):

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սողանքներ, սեյսմիկ բնութագիր

Բալսահովիտի բազալտների հանքավայրի Արևելյան տեղամասը լեռնագրական տեսակետից տեղամասի տարածաշրջանը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի արևելյան եզրամասում տարածված Կոտայքի հրաբխային սարավանդին, որը հյուսիս-արևելքում եզրավորվում է Գեղամա լեռներով (լ. Աժդահակ, 3598մ) և Ողջաբերդի լեռնաբազուկով, հյուսիսում՝ Հատիս (2528մ) և Գութանասար (2299մ) լեռնազանգվածներով, իսկ հարավում՝ Նորքի սարավանդով:

Կոտայքի (Քանաքեռի) հրաբխային սարահարթը բլրային ռելիեֆով տարածք է՝ կտրտված բազմաթիվ ձորակներով և սարավանդային խոր գետահովիտներով: Սարահարթը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտները: Հարավ-արևմուտքում Կոտայքի սարահարթը աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա Գետառ և Ջրվեժ գետերի ջրբաժանը: Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200-1500մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ: Տեղ-տեղ բաձրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլրակներ և խարամային կոներ:


Արևմուտքից՝ Պտղնի գյուղի մոտակայքից անցնում է բազալտներով և տուֆերով կազմված բլրակների մի շղթա: Նմանատիպ բլրակների շղթա է ձգվում Արամուս գյուղի շրջանում հարավ-արևելյան ուղղությամբ: Ուսումնասիրվող շրջանի բացարձակ նիշերը տատանվում են 1400մ-ից մինչև 2000մ:

Լեռնազանգվածների թեք ու անտառազուրկ լանջերը կտրտված են հեղեղատներով ու ոչ խորը գետահովիտներով: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8°-ից չեն անցնում:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները ներկայացված են ստորև նկար 5-6-ում:




Նկար 5.



Նկար 6.

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Արևելյան տեղամասի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.4g կամ 400սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 7):



Նկար 7.

Սողանքային մարմիններ հայցվող տեղամասի կամ հարակից տարածքում չի արձանագրվել: Համաձայն արտակարգ իրավիճակների նախարարության ՀՀ սողանքային աղետի կառավարման ծրագրի ավարտական հաշվետվության հայցվող տարածքի շրջանում հայտնի սողանքային մարմինների տեղադիրքերը ներկայացված են նկար 8-ում:

Մոտակա սողանքային մարմինը գտնվում է Արևելյան տեղամասից 2.9կմ հեռավորության վրա:

2.2 Շրջանի կլիման

Կլիմայական տեսակետից Բալախովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի շրջանը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ: Երևակման շրջանի օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմել է -23°C , իսկ առավելագույնը՝ $+36^{\circ}\text{C}$, օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ $+8.7^{\circ}\text{C}$:

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 534 մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 15-30սմ: Քամիների գերակշռող ուղղությունը ամռանը և ձմռանը հարավից, տարեկան միջին արագությունը 1.7մ/վրկ: Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը կազմում է 86 օր:


Ստորև նկար 9-ում ներկայացված են շրջանին բնորոշ կլիմայի տիպերի տարածումը:

Շրջանի կլիմական բնութագրերը ներկայացվում են ըստ Մայակովսկու օդերևութաբանական կայանի կատարած հետազոտությունների, աղյուսակներ 3-5 :

Աղյուսակ 3.


Ջերմաստիճանը

Բարձրություն ծովի	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1411	-5.3	-3.7	2.1	8.8	13.5	18.0	21.7	21.1	16.7	10.2	3.9	-2.3



Նկար 8.

Կլիմայական տիպերի սխեմատիկ քարտեզ



1 - Չոր ցամաքային կլիմայական գոտի

Նկար 9.

Աղյուսակ 4.

Օդի հարաբերական խոնավությունը

Միջին տարեկան	Ըստ ամիսների											
	I	II	III	IV	V	IV	VII	VIII	IX	X	XI	XII
66	77	72	69	65	63	57	55	56	57	66	75	77

Աղյուսակ 5.


Մթնոլորտային տեղումները
Տեղումների քանակը, մմ
միջին ամսական/առավելագույն տարեկան

Ըստ ամիսների												Տարե- կան
I	II	III	IV	V	IV	VII	VIII	IX	X	XI	XII	
31	36	50	65	70	45	23	12	16	37	38	32	455
29	18	30	40	57	33	31	42	29	41	51	19	57

2.3 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի կամ հարակից Մայակովսի, Բալահովիտ, Գետարգել բնակավայրերի տարածքում չկա: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից տարածքում մթնոլորտային օդի պարբերական մոնիթարինգ չի իրականացվում:


Մոտակա դիտակայանները գտնվում են մոտ 4-5կմ հեռավորությունների վրա, Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի տարածքում (նկար 10):




Նկար 10.

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:


Երևան քաղաքում ս.թ. դեկտեմբերին կատարված դիտարկումների տվյալները և դրանց համեմատականը 2022 թվականի մոնիթորինգի տվյալների հետ ներկայացված է նկար 11-13-ում:



Նկար 11.




Նկար 12.



Նկար 13.

Մայակովսկի բնակավայրում մթնոլորտային օդի օդի ֆոնային աղտոտվածության ֆոնային ցուցանիշները ընդունվել են. փոշի՝ 0.2 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³, ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³ («ՀՀ բակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի): Հայցվող տեղամասի տարածքում 2023 թվականի նոյեմբերին կատարվել է մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկում, ինչը հիմք է հանդիսանալու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում մշտադիտարկումների իրականացման համար: Որոշվել են փոշու, ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները: Դրանք կազմում են փոշի՝ 0.1մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.001մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.008մգ/մ³: Հարկ է նշել, որ հայցվող տարածքի մոտակայքում առկա են երկու գործող բացահանքեր (նկար 14), որտեղ իրականացվող գործունեությունը որոշակի ազդեցություն է թողնում տարածքի մթնոլորտային օդի որակի վրա:




Նկար 14.

2.4 Ջրային ռեսուրսներ

Տարածքի խոշորագույն ջրային երակը Հրազդան գետն է, որը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ² է (առանց Սևանա

լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Սնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ զարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Հրազդան գետ հունը գտնվում է հայցվող տարածքից մոտ 4կմ հեռավորության վրա : Տեղամասի տարածքում գետային ցանց չկա : Տեղամասից մոտ 1.6կմ հարավ հոսում է Գետառ գետը (նկար 15) :




Նկար 15.

Հայցվող տեղամասի շրջանում Հրազդան և Գեոստ գետերի ջրերի մոնիթորինգ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից չի իրականացվում : Հրազդան գետի ջրերի որակի մոնիթորինգի մոտակա №54 դիտակետը գտնվում է տեղամասից մոտ 6կմ հյուսիս-արևմուտք՝ Արզնի ՀԷԿ-ից 0.5կմ ներքև (նկար 16) :




Նկար 16.

2023 թվականի նոյեմբերի ամսվա ընթացքում Հրազդան գետի ջրերի որակի մոնիթորինգի տվյալները ներկայացված են նկար 17-18-ի դիագրամներում (ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն » ՊՈԱԿ-ի պաշտոնական էջի) :



Նկար 17.



Նկար 18.


Ըստ Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի շրջանում շահագործվող Բալահովիտի բազալտի և Աբովյանի բազալտի հանքավայրերի տվյալների և կատարված դիտարկումների համաձայն՝ ստորերկրյա ջրերի հորիզոններ հայցվող տեղամասի շրջանում իսպառ բացակայում են: Դիտարկումներով պարզվել է ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հետախուզական փորվածքներում և շահագործական բացահանքերում, որը բացատրվում է Բալահովիտի և Աբովյանի հանքավայրերը կազմող ապարների ճեղքավորությամբ և ջրաթափանցելիությամբ: Չեն արձանագրվել նաև ջրհեղեղային հոսքեր:

Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի շրջանում, տեղամասից մոտ 2.6կմ հեռավորության վրա անցնում է Կոտայքի ջրանցքը (նկար 15): Այն սկիզբ է առնում Սևան-Հրազդան կասկադի Արգելի ջրէկի երրորդ աստիճանի ջրաթեքումից (դերիվացիա): Շահագործման է հանձնվել 1962-ին: Ջրանցքի երկարությունը 43կմ է, ջրթողունակությունը՝ 6մ³/վ: Ոռոգում է Կոտայքի մարզի (8,3 հազ. հա) և Երևանի շրջակա (192 հա) հողատարածքները:

2.5 Հողեր

Բալսահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի շրջանում զարգացած են հիմնականում լեռնաշագանակագույն հողերը, որոնց ենթատիպերի տարածումը ներկայացված է ստորև նկար 19-ում: Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:



Նկար 19.

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Տեղամասի սահմաններում տարածված բաց-շագանակագույն մանրախճաքարքարոտ կարբոնատային-ցեմենտացված հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Հողերի ծավալային զանգվածը 1.35գ/սմ^3 -ի, տեսակարար զանգվածը՝ 2.13գ/սմ^3 -ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 36.4%, խոնավությունը՝ 27%-ի սահմաններում: Հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 17.4%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալվալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Հայցվող տեղամասում նախնական դիտարկումների արդյունքում պարզվել է, որ երևակման տարածքում հողաբուսաշերտը կազմում է միջինը 0.35մ (տատանվում է 0.2-0.5մ սահմաններում):

2023 թվականի նոյեմբերին կատարվել է տեղամասի տարածքի հողերի նմուշառում՝ ծանր մետաղների և այլ աղտոտիչների պարունակությունները ուսումնասիրելու նպատակով: Պարարտանյութերի, դրանց բաղկացուցիչ տարրերի, օրգանական այլ աղտոտիչների պարունակություններ չեն արձանագրվել: ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի №01-Ն հրամանով սահմանված աղտոտիչներից հողերում արձանագրվել է 0.4մգ/կգ պղնձի և 2.1մգ/կգ ցինկի պարունակություններ:


Հայցվող տեղամասում նախկինում խախտված/վերականգնված տարածքներ չեն արձանագրվել, հանված, կուտակված, պահեստավորված հողային զանգված չի նշվել:

2.6 Բուսական և կենդանական աշխարհ

Շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները:

Աճում են նաև օշինդրա-էֆեմերային տեսակներ՝ *Artemisia Fragens Willd.*, *Kochia Prostrata (L.) Schrad.*, *Capparis spinosa Willd.*, *Ceratoides papposa Botsch. Et Ikonn.*, *Atraphaxis spinosa L.*, *Rhamnus pallasii Fisch. Et Mey.*, *Tanacetum argyrophyllum (C.Koch) Tzvel.*, *Poa bulbosa L.* *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis (Gouan) Parl.*:

Ստորև նկար 20-ում ներկայացված են բուսական հիմնական տիպերի տարածման քարտեզը:



Նկար 20.

Ընդհանուր առմամբ Բալահովիտի և Արովյանի բազալտի հանքավայրերի շահագործման արդյունքում հայցվող տեղամասի շրջանում (Մայակովսկի-Բալահովիտ-Գետակգել գյուղերի հատված) ձևավորվել է տեխնածին,

ընդերքօգտագործման աշխատաքներով խախտված, արտադրական հրապարակներով, լցակույտերով և ներհանքային ճանապարհներով զբաղեցրած լանդշաֆտ (նկար 21):



Նկար 21.

Տեղամասի տարածաշրջանում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատարվել է Կարմիր գրքերի նյութերի վերլուծություն (հիմք՝ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքը <http://www.mnp.am>):

Ընդհանուր առմամբ Բալահովիտի հանքավայրի Արևելյան տեղամասի տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- ականթ դիոսկորեանման (*Acanthus dioscoridis* L.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, որը աճում է Հատիս լեռան ստորոտում, տեղամասից ավելի քան 9կմ հեռավորության վրա,

- ձագախոտ էգինյան (*Erysimum eginense* Bornm.) – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Զառ գյուղի մոտ, տեղամասից մոտ 8.5կմ հեռավորության վրա,

- գառնառվույտ լազիստանյան (*Oxytropis lazica* Boiss.) – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Հատիս գյուղի մոտ, տեղամասից 13կմ հեռավորության վրա:

Տեղամասի տարածքը ուսումնասիրվել է երթուղիների ցանցով, ինչի արդյունքում վերը նշված կարմիրքգրային տեղակների աճելավայրեր չեն արձանագրվել :

Տեղամասի շրջանում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Կաթնասունները առավել մեծ քանակությամբ ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Բազմազան է թռչնաշխարհը, հանդիպում են սպիտակախածի կեռնեխ, լեռնային խաղտտիկ և կիսասպիտակավիզ ճանճորս: Բազմաթիվ տեսակներով ներկայացված են մորեխները (սովորական իտալական մորեխ, ձիուկ, մթնաթև, ծղրիդ): Լայն տարածված են բզեզները և թիթեռները (շաղգամ, կաղամբի ձերմակաթիթեռ): Սողունների և երկկենցաղների ֆաունան աղքատիկ է: Երկկենցաղներից տարածքում հնարավոր է հանդիպել միայն Կանաչ դողոշի (*Bufo viridis*):

Տեղամասի տարածքում նախնական դիտարկումների արդյունքներով խոշոր կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր արձանագրվել: Ֆիքսվել են դաշտամկան բազմաթիվ գետնափոր բներ :

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից տարածաշրջանում հատնի են.

- տոնական գնայուկ(*Poecilus festivus*), նեղ սևամարմին (*Laena constricta* Khnzorian) և հայկական սևամարմին (*Armenohelops armeniacus* Nabozhenko) – հազվագյուտ տեսակներ են, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,

- ալեքսանոր առագաստաթիթեռ (*Papilio alexanor orientalis* Romanoff) և ավրորինա դեղնաթիթեռ (*Colias aurorina* Herrich-Schaffer) – խոցելի տեսակներ են, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,

- սիրիական սխտորագորտ (*Pelobates syriacus* Boettger)– խոցելի տեսակ, հանդիպում է Ջրվեժ, Առինջ, Ողջաբերդ գյուղերի շրջակայքում, տեղամասից 2.7-7.7կմ հեռավորությունների վրա,

- երկարատու սցինկ (*Eumeces schneideri*) – խոցելի տեսակ, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,

- Կարելինի մռայլ արջաթիթեռ (*Axiopoena karelini* Ménétrés) – խոցելի տեսակ, դիտարկվել է Աբովյան քաղաքի շրջակայքում, տեղամասից մոտ 3.5կմ հեռավորության վրա,

- Ասիական լայնականջ չղջիկ (*Barbastella leucomelas* Gretschmar) - խոցելի տեսակ, դիտարկվել է Աբովյան քաղաքի շրջակայքում, տեղամասից մոտ 3.5կմ հեռավորության վրա,

- Անդրկովկասյան կապտաթիթեռ (*Plebejus transcaucasicus*) – վտանգված տեսակ, դիտարկվել է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա :

- Դիանա կապտաթիթեռ (*Neolysandra diana* (Miller, 1923)) – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, տարածված է Կոտայքի մարզում՝ Գեղաղիր, Չորաղբյուր գյուղերի շրջակայք, Հատիս լեռ, հայցվող տարածքից համապատասխանաբար 9.8կմ, 4կմ և 8.5կմ հեռավորությունների վրա :

ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված, վերը նշված կենդանական տեսակները Հարավ-արևմտյան տեղամասի սահմաններում չեն դիտարկվել:

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից թե բույսերի, թե կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելա- և ապրելավայրերը գտնվում են Արևելյան տեղամասի տարածքից զգալի հեռավորությունների վրա :

2.7 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Բալանհովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ (արգելոց, ազգային պարկ, արգելավայր և այլն), որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Բնության հատուկ պահպանվող տարածքներից են նաև բնության հուշարձանները: ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը: Համաձայն նշված փաստաթղթի, ՀՀ Կոտայքի մարզում գտնվում են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 6.

Հ/Հ	Բնության հուշարձանը	Գտնվելու վայրը
1	2	3
1.	«Անանուն» խզվածքներ	Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
2.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
3.	«Թագավորանիստ» խարամային կոն	Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
5.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավձի կրաքարերի կոնտակտ	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6.	«Ծակ քար» բնական թունել	Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7.	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9.	«Անանուն» լանջային էրոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին
10.	«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11.	«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
12.	«Հատիս» հրաբուխ	Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
13.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
14.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
15.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
16.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17.	«Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
18.	«Գուրթանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ

1	2	3
19.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեգխարաբ» գյուղատեղիի մոտ
20.	Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	գյուղ Ձորաղբյուր
21.	«Հաղպրտանք» աղբյուր	Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
22.	«Համով» աղբյուր	Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
23.	«Քաղցր» աղբյուր	Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
24.	«Ձորի» աղբյուր	Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
25.	«Ավազան» աղբյուր	Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
26.	«Սագերի» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
27.	«Վիշապա» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
28.	«Բազմալիճք» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
29.	«Լուսնալիճ» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ
30.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
31.	«Ռեիկտային կրկես Քյորոլի լեռան մոտ»	Արտավազ գյուղի մոտ
32.	«Ալպյան գորգ»	Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում
33.	«Թանթրվենի Տիգրանի»	Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից, Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասում, հարակից Մայակովսկի, Բալահովիտ և Գետարգել բնակավայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Բնության մոտակա հուշարձաններն են Ձորաղբյուրի բրածո ֆլորան և Հատիս հրաբուխը, որոնք գտնվում են երևակման տարածքից տարածքից մոտ 4կմ և 9կմ հեռավորությունների վրա:

2.8 Անտառային ռեսուրսներ

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասում, հարակից Մայակովսկի, Բալահովիտ և Գետարգել բնակավայրերում անտառային ֆոնդի հողեր, անտառապատ տարածքներ հաշվառված չեն :

Հետևաբար, նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները անտառային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չեն ունենալու :

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Բալանսավիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասը վարչական առումով ընդգրկված է ՀՀ Կոտայքի մարզի տարածքում:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Մարզի տարածքը կազմում է 2086 քառ. կմ, որը ՀՀ տարածքի 7%-ն է: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին: Մարզն ընդգրկում է երեք տարածաշրջաններ՝ Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի: Համայնքների թիվը 67 է, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է:

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.1 %-ը (154584.3 հա), որոնք կազմում են Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 7.6 %-ը: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը (51.1%) և վարելահողերը (24.4%), որոնք համապատասխանաբար կազմում են Հանրապետության արոտավայրերի 7.5%-ը և վարելահողերի 8.5%-ը:

Մարզի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 22907.5 հա կամ մարզի տարածքի 11.0%-ը, որը Կոտայքի տարածքի համեմատ համարժեք է հանրապետության ցուցանիշին (11.2%): Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների (այդ թվում՝ արգելավայրեր, բնության հուշարձաններ) 2.6 %-ը (8694.3 հա) գտնվում է Կոտայքի մարզում, որը կազմում է մարզի տարածքի շուրջ 4.2%-ը:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների պաշարներով: Առկա են ոսկու, ալյումինի, պղինձ- մոլիբդենի, երկաթի, պեռլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելինային սիենիտների, անդեզիտաբազալտների, հրաբխային խարամների, քարաղի, զանազան շինարարական նյութերի հանքավայրեր: Մարզում առկա են հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրեր՝ Բջնիի, Արզնիի և Հանքավանի, որոնք բուժական նպատակներով օգտագործելու մեծ

հնարավորություններ ունեն: Նշված հանքավայրերից առաջին երկուսը շահագործվում են թերծանրաբեռնվածությամբ, իսկ Հանքավան հանքային ջրի նկատմամբ դեռևս հետաքրքրություն չկա:

Կոտայքի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, քարաթափվածքները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, մառախուղը, երաշտները և անտառային հրդեհները: Մարզի տարածքում ավտոճանապարհներին սպառնացող քարաթափումները գտնվում են Երևան-Սևան մայրուղու 37-րդ կմ, Հրազդան-Բջնի, Չարենցավան-Արգել, Արզնի-Նոր Գեղի, Ողջաբերդ-Գառնի-Գեղարդ հատվածներում, առկա սողանքային գոտիներից առավել ակտիվ և վտանգավոր գոտիները գտնվում են հիմնականում Ողջաբերդի, Հացավանի, Հանքավանի տարածքներում:

Կոտայքի մարզի մի շարք պաշտոնական վիճակագրական ցուցանիշները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 7.

Ցուցանիշը	Կոտայք
1	2
Մարզի մշտական բնակչությունը	251.2 հազ.մարդ
Արյղյունաբերական արտադրանքի ծավալը	253870.3 մլն.դրամ
Գյուղատնտեսական համախառն արտադրանքը	73.7 մլրդ.դրամ
Շինարարության ծավալը	6.6 մլն.դրամ
Շինմոնտաժային աշխատանքներ	6.3 մլն.դրամ
Ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը	70.4 մլն.տ/կմ
Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը	2410 հազ.ուղևոր
Կապի ծառայության հասույթը	8472.3 մլն.դրամ
Մանրածախ առևտրի շրջանառությունը	69930.0 մլն.դրամ
Ծառայությունների ծավալը	53490.1 մլն.դրամ
Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա համեմատ	100.1

1	2
Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ	96.2
Զբաղվածների քանակը	46.5 հազ.մարդ
Գործազուրկների թիվը	12.2 հազ.մարդ
Միջին ամսական անվանական աշխատավարձը	150265 դրամ
Առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը	46
Գրանցված հանցագործությունների քանակը	2180
Կենսաթոշակառուների թվաքանակը	38180 մարդ
Նախադպրոցական հաստատությունների քանակը	224
Հանրակրթական դպրոցների քանակը	101
Գործող թանգարանների քանակը	-
Գրադարանների քանակը	5
Մարզական կազմակերպությունների քանակը	14

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարաբոստանային կուլտուրաների ցանքաստարածությունների, խաղողի տնկարկների, անասնազլխաքանակի վերաբերյալ տվյալները ամփոփված են աղյուսակներ 8-10-ում :

Աղյուսակ 8.

Տեղեկատվություն գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ

Մշակաբույսը	Ցուցանիշները		
	Ցանքաստարածությունները, հա	Բերքատրվությունը, ց/հա	Համախառն բերքը, հազ.տոննա
1	2	3	4
Հացահատիկ, հատիկաընդեղեն	9813	18.7	18.4
Կարտոֆիլ	637	190.7	12.1
Բանջարանոցային մշակաբույսեր	936	136.8	23.0
Պտուղ և հատապտուղ	4651	38.6	15.9
Խաղողի տնկարկ	136	34.9	0.3

Աղյուսակ 9.

Տեղեկատվություն գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի վերաբերյալ (հազ.գլուխ)

Մարզը	Խոշոր եղջերավոր	Որից՝ կովեր	Խոզեր	Ոչխարներ և այծեր	Ձիեր
Կոտայք	52.1	24.4	28.4	44.4	0.7

Աղյուսակ 10.

Անասնաբուժական արտադրանքի ծավալը

Մարզը	Իրացվել է գյուղատնտեսական կենդանի և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա	Կաթ, հազ.տոննա	Ձու, մլն.հատ	Բուրդ, տոննա
Կոտայք	22.0	67.6	171.6	72.3

Մարզի մշտական բնակչության 48.2%-ը կազմում են տղամարդիկ, 51.8%-ը՝ կանայք: Մարզի բնակչության մեջ գերակշռում են 30-62 տարեկանները (44.8 %), ընդ որում տղամարդիկ կազմում են 43.4%, կանայք՝ 46.1%, իսկ երիտասարդները (15-29 տարեկան) կազմում են ազգաբնակչության 23.3%-ը, համապատասխանաբար՝ տղամարդիկ՝ 24.3 %, կանայք՝ 22.4 %:

Կոտայքի մարզի բնակչության կրթական մակարդակն ունի հետևյալ պատկերը՝ բարձրագույն կրթություն ունեցողներ՝ 15,6%, միջին մասնագիտական՝ 15,6%, նախնական մասնագիտական՝ 4,5%, միջնակարգ՝ 37,6%, հիմնական՝ 12,5%, տարրական՝ 8,7% և չունի տարրական կրթություն՝ 5,5%: Քաղաքներում գյուղերի համեմատաբար բարձր է բարձրագույն կրթության մակարդակը՝ 66%-ով, միջին մասնագիտական կրթության մակարդակը՝ 60%-ով:

Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, սահմանակից է 5 մարզերի և Երևան քաղաքի հետ, մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունն ընդամենը 50 կմ է: Մարզով են անցնում Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման և Բալախովիտ-Մասիս (Երևանը

շրջանցող) միջպետական ճանապարհները (56.18կմ): Մարզի տարածքով են անցնում Երևան-Սևան-Շորժա (68 կմ) և Հրազդան-Իջևան (20 կմ) երկաթուղիները:

Մարզի ավտոճանապարհներին զգալի է նաև տարանցիկ երթուղիների թիվը: Մարզում բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի միջոցով: Ավտոմոբիլային փոխադրումները մարզում կազմում են ընդհանուր փոխադրումների շուրջ 95%-ը, ինչով և պայմանավորված է ավտոմոբիլային ճանապարհների գերակա դերը տնտեսությունում:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «ԱրմենՏել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվասել/ՄՏՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզում լարային հեռախոսակապ ապահովում են ԱրմենՏելը և Ռոստելեկոմը՝ 48 համայնքներում: Մարզի բնակավայրերում գործում են «Հայփոստ» ՓԲԸ-ի 66 փոստային բաժանմունքներ:

Մարզի բոլոր համայնքների բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստատեսություն: Գործում է Կոտայք TV մարզային հեռուստաընկերությունը: Մարզի ամբողջ տարածքն ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև Հանրային ռադիոն, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի համայնքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից, կապտաժներից՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով: Չնայած կատարված աշխատանքներին, կան դեռևս լուծում պահանջող հիմնախնդիրներ՝ Լեռնանիստ համայնքը չունի ջրամատակարարման ցանց:

Մարզի 29 համայնքներում գոյություն ունեն կոյուղու հեռացման գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 53%-ին: Ներկայումս մարզի կոյուղու համակարգ ունեցող բոլոր բնակավայրերի կոյուղագծերը գտնվում են անմխիթար վիճակում և միացված են հոսող գետերին, ջրամբարներին:

Հրագրանի տարածաշրջանում առկա է կեղտաջրերի մաքրման չգործող կայան, որը մինչև 1992թ-ը իրականացրել է Ծաղկաձորի, Հանքավանի և Հրագրանի կոյուղաջրերի կենսաբանական մաքրում:

Մարզով են անցնում մագիստրալ գազատարեր, առկա են գազի ստորգետնյա պահեստարաններ: Գազաֆիկացված բնակավայրերում ապրում է մարզի բնակչության 98,6%-ը: Կոտայքի մարզի գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը կազմում է ավելի քան 1060 կմ:

▪ **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Արևելյան տեղամասի տարածքը ներառված է Արովյան խոշորացված համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական տարածքում:

Բնակավայրի բնակչության և սոցիալական կազմի վերաբերյալ տվյալները ամփոփված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11.

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	2235
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	467
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	2
2.2	Կիսակառույց տներում բնակվող	10
3.	Ընտանեկան, սոցիալական նպաստ ստացող ընտանիքների քանակը	28

Աղյուսակ 12.

Հ/Հ	Ցուցանիշների անվանում	Չափի մ.	Քանակը	Իգական	Արական
1	2	3	4	5	6
1.	Բնակչության թիվը, այդ թվում՝	մարդ	2235	1103	1132
1.1	0-6 տարեկան	մարդ	184	88	96
1.2	7-17 տարեկան	մարդ	323	151	172
1.3	18-63 տարեկան	մարդ	1417	688	729
1.4	63 տարեկանից բարձր	մարդ	311	135	176
2.	Կենսաթոշակառուներ	մարդ	320	180	140
3.	Փախստականներ	մարդ	18	12	6
4.	Հաշմանդամներ	մարդ	27	5	22

1	2	3	4	5	6
5.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	մարդ	1	0	1
6.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	մարդ	0	0	0
7.	Միասնական սոցիալական ծառայության Աբովյանի տարածքային կենտրոնում հաշվառված ընտանիքների թիվը	ընտանիք	36	x	x
8.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտանիք	23	x	x
9.	Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտանիք	8	x	x
10.	Արցախյան 44 օրյա պատերազմի զոհեր	ընտանիք	18	x	18
11.	Աշխատանքային տարիքի բնակչության թիվը	մարդ	1473	713	760

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, ծխախոտագործությամբ, պտղաբուծությամբ և բանջարա-բոստանային կուլտուրաների մշակությամբ:

Գյուղում գործում է մեկ մանկապարտեզ, 2 հիմնական դպրոց:

Բնակիչների առողջապահական բնագավառի սպասարկումը կատարվում է «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ կողմից (6 ընդհանուր աշխատակից, 4 բուժաաշխատակից):

Բնակավայրի վարչական սահմաններում ներառված է 567.26 հեկտար հողամաս, որից՝ գյուղատնտեսական նշանակության՝ 283.48 հեկտար, բնակավայրերի հողերի՝ 23.17 հեկտար, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ 19.78 հեկտար, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ 2.75 հեկտար, հատուկ պահպանվող տարածքների՝ 1.21 հեկտար, ջրային հողերի՝ 0.04 հեկտար:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով:

Բազալտների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են համայնքի բնակիչներին: Նախնական գնահատման հայտին կից տրամադրվում է նաև հանրային քննարկումների արձանագրությունը:

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N1793-Ն և 2007 թվականի մարտի 15-ի N 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Մայակովսկի բնակավայրի տարածքում նշված են պատմության և մշակույթի հետևյալ հուշարձաններ:

Աղյուսակ 13.

Հ/Հ	Անվանումը	Ժամանակը	Գտնվելու վայրը
1.	Ամրոց	ք.ա. 2 հազ.	գյուղից արևելյան եզրին
2.	Դամբարանադաշտ	ք.ա. 2 հազ.	ամրոցի արևմտյան մասում
3.	Ամրոց	ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2.5-3կմ հարավ
4.	Դամբարանադաշտ	ք.ա. 2-1 հազ.	
5.	Գերեզմանոց	14-15դդ.	գյուղի հյուսիսային մասում
6.	Գերեզմանոց	17-20դդ.	գյուղի մեջ
7.	Խաչքար	1204թ.	գյուղից 1կմ հարավ-արևմուտք

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Արևելյան տեղամասի և Մայակովսկի բնակավայրի պատմական, մշակութային հողերի միջև հեռավորությունը կազմում է 2.2-2.5կմ:

Հետևաբար, տեղամասում ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները չեն կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բալահովիտի հանքավայրի Արևելյան տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նկարագիրը ներկայացված է ստորև:

Մթնոլորտային օդ.

Բազալտների հետախուզման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար գազերի արտանետումները կապված կլինեն հորատման, փորձնական արդյունահանման և ավտոտրանսպորտի շարժման հետ:

Տրանսպորտի շարժման ժամանակ 1կմ վազքի դեպքում մթնոլորտ է արտանետվելու մոտ 0.04գ/վրկ (հաշվի առնելով տրանսպորտի միջին բեռնունակությունը, տեղաշարժման միջին արագությունը, ճանապարհների վիճակը, վազքի երկարությունը, մակերևույթի շերտի խոնավությունը) կամ 0.03տ :

Դիզելային վառելիքի տարեկան ծախսը կազմում է 26տ կամ 0.1տ/օր: Մեծ բեռնունակությամբ ավտոտրանսպորտի (բեռնատար և էքսկավատոր) վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումներն են.

Աղյուսակ 14.

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումների քանակը, տ/տարի	Արտանետումների քանակը, գ/վրկ
CO	36.4	0.95	0.127
N ₂ O	0.122	0.003	0.0004
ՑՕՄ	8.16	0.21	0.028

Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասի տարածքում ծրագրավորված աշխատանքների իրականացման ժամանակ վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) և փոշու առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են: Մոտակա Գետառ գետը գտնվում է հայցվող տարածքից մոտ 1.6կմ հեռավորությունների վրա :

Հողային ծածկույթ.

Տեղամասի տարածքում զարգացած են միջինը 0.35մ հզորությամբ շագանակագույն հողերը: Հետախուզական աշխատանքներով խախտվելու է ընդամենը 585մ² տարածք՝ այդ թվում 525մ² հորատման հրապարակներ և 60մ² փորձնական բացահանքի մակերես:

Որպես ազդեցություն հնարավոր է նաև տեղամասի տարածքի աղտոտում նավթամթերքներով :

Ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, որոնք անհրաժեշտության դեպքում կբարեկարգվեն:

Բուսական և կենդանական աշխարհ.

Բազալտի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է, քանի որ ընդհանուր առմամբ տեղամասի տարածաշրջանը հանդիսանում է քաղաքաշինորեն-տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտի: Աբովյանի, Արամուսի, Կամարիսի, Բալահովիտի հանքավայրերը, դրանց տեղամասերը շահագործվում են բազմաթիվ ընկերությունների կողմից սկսած 1960թ.-ից: Տարածքում առկա են բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Միաժամանակ, տարածքում արձանագրված բուսատեսակները լայն տարածում ունեն ՀՀ կիսաանապատային-տափաստանային լանդշաֆտներում, հանդիսանում են «ֆոնային» տեսակներ:

Տեղամասի տարածքում չեն դիտարկվել խոշոր կաթնասունների բներ, որջեր:

Չեն արձանագրվել նաև պահպանվող, էնդեմիկ, ՀՀ բույսերի կամ կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր.

Արևելյան տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: ԲՀՊ տարածքներ չկան նաև հարակից Բալահովիտ, Մայակովսկի և Գետարգել բնակավայրերի տարածքում:

Բնության մոտակա հուշարձաններն են Չորաղբյուրի բրածո ֆլորան և Հատիս հրաբուխը, որոնք գտնվում են երևակման տարածքից տարածքից մոտ 4կմ և 9կմ հեռավորությունների վրա:

Պատմության և մշակութային հուշարձաններ

Մայակովսկի բնակավայրի պատմամշակութային հուշարձանները գտվում են Արևելյան տարածքից մոտ 2.2-2.5կմ հեռավորության վրա: Փորձնական արդյունահանման աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման աշխատանքների, հորատասեպային եղանակով: Հետևաբար, պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա որևէ ազդեցություն չի դրսևորվելու:

Աղմուկ

Համաձայն ՄՆ-245-71 սանիտարական նորմերի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական գոտի սահմանված չէ: Առանց պայթեցման աշխատանքների կիրառման քարի արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանվում է 50մ սանիտարական գոտի: Արևելյան տեղամասի և Մայակովսկի գյուղի բնակելի տարածքների միջև նվազագույն հեռավորությունը կազմում է 1.06կմ:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են հորատման աշխատանքները, տրանսպորտի տեղաշարժը և փորձնական արդյունահանում:

Տեղամասում հորատման աշխատանքներից, բեռնատարի և ջրցան մեքենայի տեղաշարժից առաջացող զումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ կազմում է 75դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$LA_{տար} = La_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} \text{ քանաձևով, որտեղ՝}$$

$$La_{էկվ} - \text{աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, } La_{էկվ}=75\text{դԲԱ,}$$

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta LA_{հեռ}$ կազմում է 25դԲԱ,

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (տեղամասի ռելիեֆ), $\Delta LA_{էկր} = 15\text{դԲԱ,}$

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ} = 5\text{դԲԱ:}$

Աղմուկի մակարդակը Մայակովսկի գյուղի մոտ կկազմի՝

$$La_{տար} = La_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 75 - 25 - 15 - 5 = 30\text{դԲԱ}$$

(նորման 45դԲԱ):

Հետևաբար, բազալտների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը հարակից բնակավայրերի տարածքում ազդեցություն բնակիչների վրա չեն ունենալու:

Արևելյան տեղամասի տարածքում սանիտարական պաշտպանության գոտու սահմանում պահանջող օբյեկտներ (օրինակ՝ ջրամատակարարման կառույցներ) չկան:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով.

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ կարող են առաջանալ հետևյալ տեսակի թափոններ.

- Հորատման թագիկների թափոններ, որոնք բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են: ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N 430-Ն հրամանի հավելվածի ցանկում հորատման արդյունքում առաջացած հորատման թագիկների թափոններ հաշվառված չեն:

- Չտեսակավորված կենցաղային աղբ, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Օրեկան ծավալը՝ 1.5կգ/մարդ;

- Հորատման հարթակների շինարարության և փորձնական բացահանքի անցման ժամանակ 0.35մ հզորությամբ հողաբուսական շերտը (մոտ 211.78մ³ ծավալով, որից 183.75մ³ հորատման հարթակներում և 28մ³ փորձնական բացահանքում) հեռացվելու է և ժամանակավորապես կուտակվելու է փորվածքների անմիջական հարակից տարածքում: Հորատման հարթակների կառուցման և փորձնական բացահանքի անցման ժամանակ նախապես հեռացվող հողաբուսական շերտը թափոն չի հանդիսանում:

- Փորձնական բացահանքի տարածքից առաջանալու է նաև մոտ 90մ³ փուշտա շերտի առաջացումներ (ջարդոտված, խիստ ճեղքավորված բազալտ, տուֆեր), ինչը ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամաններին համաձայն մակաբացման ապարները հաշվառվել են 34000120 01 99 5 ծածկագրով: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են: Առաջացող 90մ³ ընդերքօգտագործման թափոններից 50մ³-ը

ուղարկվելու է լաբորատորիա՝ որպես խճի և ավազի ստացման հումք ուսումնասիրելու նպատակով:

Հորատման արթակների շինարարության ժամանակ առաջանալու են մոտ 1310մ³ ընդերքօգտագործման թափոններ՝ դեյուվիալ փուխր-բեկորային առաջացումներ (կավավազներ տուֆերի և բազալտների տարաչափ բեկորներով): Դրանք ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամաններին համաձայն հաշվառվել են 34000120 01 99 5 ծածկագրով:

Անտառային ռեսուրսներ.

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասում, հարակից Մայակովսկի, Բալահովիտ և Գետարգել բնակավայրերում անտառային ֆոնդի հողեր, անտառապատ տարածքներ հաշվառված չեն :

Հետևաբար, նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները անտառային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չեն ունենալու :

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր: Աղբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ նախատեսվում է կնքել պայմանագիր և կատարել համապատասխան վճարումները:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով աշխատանքների ընթացքում ջրցանում տեղամասի ճանապարհի երկայնքով, հորատման հարթակների և փորձնական բացահանքի սահմաններում: Ըստ գործող նորմատիվների՝ 1մ² տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Փոշենստեցման նպատակով անհրաժեշտ մոտ 2տ ջուրը նախատեսվում է վերցնել Կոտայքի ջրանցքից, որի նպատակով ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո ընկերությունը դիմելու է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման թույլտվություն հայցելու նպատակով: Խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի ծախսը կազմում է 0.025մ³/մարդ, օրեկան 0.15մ³ ծավալով : Այս ջուրը նախատեսվում է գնել մոտակա Մայակովսկի կամ Բալահովիտ բնակավայրերի առևտրի կետերից 5լ կամ 6լ-ոց տարաներով աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր օր և աշխատանքները սպասարկող մեքենայով տեղափոխել տեղամասի տարածք: Հորատումը կկատարվի հատուկ լուծույթների կիրառմամբ՝ փոշեզոյացումը նվազեցնելու/կրճատելու համար:
- Հորատման մաշված թագիկների կառավարում (հավաքում, տեղափոխում, հետագայում հանձնում որպես մետաղի ջարդոն), որը իրականացվելու է հորատման ծառայություններ իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից:

- Կեղտաջրերի հավաքում հորատի պ գուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով, դատարկված փուրը նախատեսվում է լցնել քարերով :
- Խախտված լանդշաֆտի վերականգնում, ինչի նպատակով հորատման հարթակների կառուցման և փորձնական բացահանքի անցման ժամանակ հողի վերին շերտը 0.35մ առավելագույն հզորությամբ նախատեսվում է հանել, կուտակել անմիջապես փորվածքի և հարթակի կողքը: Պահպանման ընթացքում հողաբուսական շերտի կխառնվի հնեցված գոմաղբ: Հետախուզական աշխատանքների ավարտից հետո, հորատման հարթակները կռեկուլտիվացվեն օգտագործելով կուտակված հողաշերտը: Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են անմիջապես աշխատանքների ավարտից հետո՝ հետախուզական աշխատանքներին մասնակցող անձնակազմի և տեխնիկայի ուժերով: Փորձնական բացահանքի անցման ժամանակ հողաբուսական շերտը նախատեսվում է կուտակել փուշտա շերտի ջարդոտված բազալտներից, կավավազային-ավազակավային առաջացումների առանձին: Ռեկուլտիվացված տարածքներում կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք:

Վերականգնման ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 585մ²՝ այդ թվում 525մ² հորատման հրապարակներ և 60մ² փորձնական բացահանքի մակերես :

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար անհրաժեշտ գումարի բացվածքը ներկայացված է ստորև, աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15.

h/h	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի գինը, հազ. դր	Գումարը, հազ.դր
1	2	3	4	5	6
1.	Բուսահողի կտրում ձեռքով և պահեստավորում հորատման հարթակների և փորձնական բացահանքի մոտակայքում	մ ³	211.8	0.5	105.9
2.	Դելյուվիալ փուխր բեկորային առաջացումների հեռացում մեխանիզացված եղանակով և պահեստավորում հորատման հարթակների և փորձնական բացահանքի մոտակայքում	մ ³	1510	0.1	151.0

1	2	3	4	5	6
3.	Նմուշարկման և փաստագրման աշխատանքների ավարտից հետո ապարների փոում և հարթեցում ռեկուլտիվացվող տարածքների սահմաններում	մ ³	1721.8	0.1	172.2
4.	Ռեկուլտիվացված տարածքի պարարտացում օրգանական պարարտացումով, սերմերի ցանկ				60.5
5.	Ռեկուլտիվացման աշխատանքներ կատարող մասնակցող անձնակազմի աշխատավարձ	հազ.դրամ			150.0
	Ընդամենը				639.6
6.	Անուղակի ծախսեր	5%			32.0
	Ընդամենը				671.6
7.	Այլ ծախսեր	10%			67.2
8.	Չնախատեսված ծախսեր				50.0
	Ամբողջը				1428.4

Նշված գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան:

- Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան: Երևական տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով՝

1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը:

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում բների հայտնաբերման նպատակով : Առկայության դեպքում, դրանց կամ դրանցում հայտնաբերված կենդանիների, թռչունների տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս :

- Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային այլքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար : Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից :

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ :

- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում :

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում :

- Պատահական գտածոների ընթացակարգը՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

✓ պետական մարմինների ծանուցում,

✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:

Նախատեսված միջոցառումների բնութագիրը ներկայացվում է նաև աղյուսակի տեսքով:

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
<p>Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ</p>	<p>Փոշու և ծխագազերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն</p>	Ջրցան	Տարեկան 100.0հազ.դրամ
		Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Ընկերության մեքենաները կահավորված են համապատասխան սարքերով, լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Հորատման ժամանակ հատուկ լուծույթների կիրառում	Ծախսերը իրականացնում է հորատող մասնագիտացված կազմակերպությունը, «Քոաշքաթ» ՍՊ ընկերությունը այս հոդվածով ծախսեր չի իրականացնելու
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	Տարեկան 150.0հազ.դրամ
		Խախտված տարածքների վերականգնում	1428.4հազ.դրամ*
	<p>Հողերի խախտում հորատման հարթակների և փորձնական բացահանքի սահմաններում</p>	<p>Խախտված տարածքների վերականգնում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների 2 (լեռնատեխնիկական և կենսաբանական) փուլերով</p>	<p>1428.4հազ.դրամ*</p>
	<p>Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով</p>	<p>Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում</p>	<p>«Քոաշքաթ» ՍՊ ընկերությունը այս հոդվածով ծախսեր չի իրականացնելու</p>

1	2	3	4
<p>Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ</p>	<p>Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով</p>	<p>Հողերի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ</p>	<p>Տարեկան 120.0հազ.դրամ</p>
		<p>Տրանսպորտի տեղաշարժ բացառապես գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհներով</p>	<p>Ծախսեր չի պահանջում</p>
	<p>Բուսածածկի խախտում հորատման հարթակների և փորձնական բացահանքի սահմաններում</p>	<p>Խախտված տարածքների վերականգնում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների 2 (լեռնատեխնիկական և կենսաբանական) փուլերով</p>	<p>1428.4հազ.դրամ*</p>
		<p>Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ</p>	<p>Տարեկան 270.0հազ.դրամ</p>
		<p>ՀՀ կառավարության 2014թ. Հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում</p>	<p>Տարեկան 100.0հազ.դրամ</p>
	<p>Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով</p>	<p>Խախտված տարածքների վերականգնում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների 2 (լեռնատեխնիկական և կենսաբանական) փուլերով</p>	<p>1428.4հազ.դրամ*</p>
		<p>Աղմուկի մակարդակի չափումներ</p>	<p>Տարեկան 50.0հազ.դրամ</p>
		<p>Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում բների հայտնաբերման նպատակով : Դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս</p>	<p>Ծախսեր չի պահանջում</p>

1	2	3	4
<p>Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ</p>	<p>Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով</p>	<p>Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար : Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից :</p>	<p>Ծախսեր չի պահանջում</p>
	<p>Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա</p>	<p>Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ</p>	<p>Ծախսեր չի պահանջում</p>
	<p>Ընդերքօգտագործման թափոնների գոյացում (փորձնական բացահանքի փուլում շերտի առաջացումներ)</p>	<p>Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում, աշխատանքների ժամանակավոր դադարեցում, պետական կառավարման մարմինների իրազեկում, հետագա աշխատանքների համաձայնեցում լիազոր մարմինների հետ</p>	<p>Ծախսեր չի պահանջում</p>
		<p>Փուլում շերտի առաջացումների օգտագործում ռեկուլտիվացիայի լեռնատեխնիկական փուլի ժամանակ</p>	<p>1428.4հազ.դրամ*</p>

* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամազույգի շահագործման 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

1	2	3	4
<p>Անձնակազմի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում</p>	<p>Տեղամասի տարածքի աղբոտում կենցաղային թափոններով</p>	<p>Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր</p>	<p>Տարեկան 150.0հազ.դրամ</p>
	<p>Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային արտահոսքերով</p>	<p>Հորատիպ բետոնապատ անջրաթափանց զուգարանի շինարարություն</p>	<p>Կատարվելու է նախքան հետախուզական աշխատանքների մեկնարկը, 25.0հազ.դրամ</p>
		<p>Հորատիպ զուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով</p>	<p>Տարեկան 80.0հազ.դրամ</p>

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Տեղամասում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ տեղամասի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 400սմ/վրկ² կամ 0.4g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վագոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ):

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վազոն-տնակում:

Տեղամասի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

Տեղամասում տեղադրվելու է շարժական վազոն-տնակ, աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով: Ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցները հարակից բնակավայրերի բնակիչներն են և երեկոյան վերադառնում են իրենց բնակության վայրը: Մա նաև թույլ կտա նվազեցնել կենցաղային կեղտաջրերի արտահոսքը:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի տարածքում ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդում փոշու և ծխազագերի մոնիթորինգ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- նավթամթերքներով երևակման տարածքի հողերի աղտոտվածության մշտադիտարկում,
- տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է երևակման և հարակից տարածքներում),
- աղմուկի մակարդակ Մայակովսկի գյուղի մոտ:

Մշտադիտարկման տեսակների և պարբերականության վերաբերյալ տվյալները ներկայացված են նաև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17.


Մշտադիտարկումների օբյեկտը և վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկման տեսակը	Նվազ. հաճախական.
1	2	3	4
Մթնոլորտային օդ (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր)	Հանքափոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր)	Նավթամթերքների մնացորդներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	ամսեկան մեկ անգամ

1	2	3	4
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ (ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան)	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ (Մայակովսկի գյուղի արևմտյան արվարձան)	Չայնային բնութագիր	Չափում ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների վերահսկման և մշտադիտարկումների կետերի տեղաբաշխման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 22-ում :

Երևակման տարածքում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար գումարները (տարեկան 590.0հազ.դրամ) ներառված են ընկերության շահագործական ծախսերի կազմում :

Մշտադիտարկման կետերի
սխեմատիկ քարտեզ



- Պայմանական նշաններ
- Հողային ծածկույթի նմուշարկման կետ
- Մթնոլորտային օդի նմուշարկման կետ
- Աղմուկի մակարդակի սուզման կետ
- ▨ Կենսաբազմազանության դիտարկման տարածք

Նկար 22.

Գրականություն

1. ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայք
8. ՀՀ Վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք
9. «Заповедники СССР. Заповедники на Кавказе». Издательство "Мысль" 1990
10. Թամանյան Կ., Գաբրիելյան Է., Ֆայվուշ Գ., Հովհաննիսյան Մ., Ներսեսյան Ա., Արևշատյան Ա., Խանջյան Ն., Վարդանյան Ժ., “Հայաստանի էնդեմիկ բույսերի կարմիր ցուցակ”
11. “Флора и растительность степей Армении”, Файвуш Г.М., диссертация на соискание ученой степени доктора биологических наук, отдел геоботаники и экологии растений Института ботаники АН Республики Армения



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ սառ 2023-06-30

«ՔՐԱՇՔԱԹ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 278.110.1327267

Հիմնադրման տարի 2023

Գրանցման ամսաթիվ 2023-06-30

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 54146896

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 00519576

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր) 44117267

Էլ. փոստ armen-m86@mail.ru

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԱՎԱՆԵՍՈՎԻ Փ. ՆՐԲ. / Շ / 8/1 / 16 ԲՆ. ԵՐԵՐՈՒՆԻ 0087 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս -

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ ԼԵՎՈՆԻ

Անձնագրային տվյալներ 004248415 2014-08-25 009

Հասցե ԱՎԱՆԵՍՈՎԻ Փ. ՆՐԲ. / Շ / 8/1 / 16 ԲՆ. ԵՐԵՐՈՒՆԻ 0087 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՐԱՎԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՅՑԱՆԻՑ ՔԱՂՎԼԷՆՔ առ 2023-06-30
 «ԳՂՍՇՔԱԾ»
 Աստիճանագրական պրաստիտուտավորչայնք ընկերություն (ՍՊԸ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ 100000


Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով
ԱՐՄԵՆ ՄԿՐՏՁՅԱՆ ԼԵՎՈՆԻ Անձնագիր h/h 004248415 2014-08-25 տրվ. 009 ի կողմից ՀԾՀ 2408860490 Հասցե՝ ԱՎԱՆԵՍՈՎԻ Փ. ՆՐԲ. / Շ / 8/1 / 16 ԲՆ. ԷՐԵՐՈՒՆԻ 0087 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2023-06-30	100 %	100000

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝ 
 ստորագրություն

ՕԼՅԱ ԶԱՎԱՐՅԱՆ



Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝

2023-06-30



Հավելված 2.

«Հաստատում եմ»

«Քոաշքաթ» ՍՊԸ-ի տնօրեն

_____ Ա.Մկրտչյան

«_____» _____ 2024թ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի

տարածքում 2024-2027թթ. կատարվելիք

երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքի տեսակը	Չափ. միավ.	Ծավալը	Միավ. արժեքը, հազ.դրամ	Գումարը, հազ.դրամ
1	2	3	4	5	6
1.	Տեղագրական հանույթ	հա	25.19	2.0	50.4
2.	Մեխանիկական սյունակային հորատում	զճ.մ	1038	35.0	36330.0
3.	Հորատման հաստոցի տեղակայում-տեղահանում	հատ	20	1.05	21.0
4.	Հորատման հարթակների շինարարություն	հատ	15	2.0	30.0
5.	Հորատհանուկի փաստագրում	զճ.մ	1038	0.1	103.8
6.	Բացահանքի փաստագրում	դրամ			10.0
7.	Ռադիոմետրիական դիտարկումներ	դրամ			250.0
8.	Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական դիտարկումներ	դրամ			150.0

1	2	3	4	5	6
9.	Փորձնական արդյունահանում	խ.մ.	240	0.41	100.0
10.	Ընդամենը դաշտային և նախապատրաստական աշխատանքներ				37045.2
11.	Բեռների և ուղևորների տեղափոխում	դրամ		10-րդ տողի 10%	3704.5
12.	Աշխատանքների կազմակերպում	դրամ		10-րդ տողի 1%	370.5
13.	Աշխատանքների լուծարում	դրամ		10-րդ տողի 0.8%	296.4
14.	Ընդամենը օժանդակ աշխատանքներ				4371.4
15.	Ընդամենը նախապատրաստական, դաշտային և օժանդակ աշխատանքներ				41416.6
16.	ԱԱՀ	դրամ		15-րդ տողի 20%	8283.32
17.	Ֆիզ.մեխ. փորձարկումներ	նմուշ	110	2.5	275.0
18.	Միներալոպետրոգրաֆիական նկարագրություն	նմուշ	20.0	5	100.0
19.	Քիմիական հետազոտություններ	նմուշ	25.0	5	125.0
	Ընդամենը	դրամ			50199.92

ԺԱՄՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Կոտայքի մարզի Բալառուվիտի բազայի հանքավայրի Արևելյան տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման և ստացված տեղեկությունը պետական փորձաքննության ներկայացնելու

Աշխատանքների տեսակները	Աշխատանքների ծավալը	Աշխատանքների կատարման ժամանակացույցը													
		2024				2025				2026				2027	
		Մ.թ.	Հ.թ.	Ի.թ.	Ե.թ.	Մ.թ.	Հ.թ.	Ի.թ.	Ե.թ.	Մ.թ.	Հ.թ.	Ի.թ.	Ե.թ.	Մ.թ.	Ի.թ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14		
Տոպոգրաֆիական հանույթ	25.19հա	25.19													
Երկրաբանական նրթուղիներ	13.5կմ	13.5													
Երկրաբանահանութային աշխատանքներ, քարտեզի կազմում	25.19հա, 1 քարտեզ	25.19հա, 1 քարտեզ													
Հորատում	1038գծ.մ	337		118	237	87		88	171						
Հորատման հաստոցի տեղակայում-տեղահանում	20 հատ	4		4	5	2		2	3						
Հորատանցքերի և բացահանքի մարկշեյթ-կապակցում	20 հորատանցք 1 բացահանք	4		4	5	2		2	4						
Փորձնական բացահանքի անցում	240մ ³								240						
Նմուշարկում															
- հանուկային	100 նմուշ	20		15	20	15			30						
- քիմ. անալիզի համար	5 նմուշ	2			2				1						
- խճի տեխնոլոգիական փորձարկման համար	1 նմուշ								1						

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
- պետրոգրաֆ. նկարագ. համար	5 նմուշ	2				2			1				
Փաստագրում													
- հորատահանուկ	1038 գծ.վ	337		118	237	87		88	171				
- փարձնական բացահանք	30գծ.վ								30				
Քիմիական անալիզ	5 նմուշ									5			
Միներալոգո- պետրոգրաֆիական նկարագրություն	5 նմուշ									5			
Ֆիզ.-մեխ. փորձարկումներ	100 նմուշ									100			
Խճի տեխնոլ. փորձարկ.	1 նմուշ									1			
Ինժեներա-երկրաբանա- կան և հիդրոերկրաբանա- կան ուսումնասիրությ.													
Հորատման հարթակների շինարարություն	15 հատ	3		3	2	2		2	3				
Ռադիոմետրիական ուսումնասիրություններ													
Շրջակա միջավայրի մշտադիտարկում													
Աշխատանոցային աշխատանքներ													
Պաշարների հաշվարկով հաշվետվության և բարտեզի կազմում													
Հաշվետվության ներկայացում ՏԿԵՆ													
Ռեկուլտիվացիոն աշխատանքներ	585մ ²	105		105	70	70		70	165				